**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ**

**ՊԵՏԱԿԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻՑ ՔԱՂՎԱԾՔ առ 2023-08-10**

# «ԻՆՍՏԵՓԱՆԱՎԱՆ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
# ՀԻՄՆԱԴՐԱՄ (ՀՄԴ)

| | |
|---|---|
| Գրանցման համար | **222.160.1335279** |
| Հիմնադրման տարի | **2023** |
| Գրանցման ամսաթիվ | **2023-08-10** |
| Գործունեության ժամկետ | **Անժամկետ** |
| Կարգավիճակ | **Իրավաբանական անձի լուծարման գործընթացում գտնվելու կամ գործունեության (գոյության) դադարման մասին պետական միասնական գրանցամատյանում տեղեկություններ գրառված չեն:** |
| Իրավաբանական անձի ծածկագիր (ԶԿԴ) | **54227011** |
| Հարկ վճարողի հաշվառման համար (ՀՎՀՀ) | **06970794** |
| Սոցիալական վճարների պարտավորությունների անձնական հաշվի քարտի համար (Ապահովադրի ծածկագիր) | **0165279** |
| Էլ. փոստ | **contact@instepanavan.am** |
| Կայք | **-** |

## Գտնվելու վայրը

| | |
|---|---|
| Հասցե | **ԻՍԱՀԱԿՅԱՆ / Տ / 7 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 1901 ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ԼՈՌԻ ՀԱՅԱՍՏԱՆ** |
| Հեռախոս | **+374 33 007837** |

## Գործադիր մարմնի ղեկավար

| | |
|---|---|
| Պաշտոն | **Տնօրեն** |
| Անուն Ազգանուն | **ՌՈՒԲԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԵԳԻ** |
| Անձնագրային տվյալներ | **011340569 2021-08-30 001** |
| Հասցե | **ՉԱՐԵՆՑԻ / Տ / 55/3 ԿԵՆՏՐՈՆ 0025 ԵՐԵՎԱՆ ԵՐԵՎԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ** |

Կազմված է 25.07.2023թ.
Բաղկացած է 17 թերթից
Տպագրված է բնդամենը 2 (երկու) օրինակ
ՕՐԻՆԱԿ 1

ՀԱՍՏԱՏՎԱԾ է
«Ինստեփանավան» Զարգացման Հիմնադրամի
Հիմնադրի
25.07.2023թ. թիվ 01/23 որոշմամբ

ԳՐԱՆՑՎԱԾ է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
10 08 2023 թ.

գրանցման համարը՝ 222.160.1335279

ՀՎՀՀ՝ 06970794

Տնօրեն

Ռուբեն Խաչատրյան

Աշխատակից՝

«ԻՆՍՏԵՓԱՆԱՎԱՆ» ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

**CHARTER OF**
**"INSTEPANAVAN" DEVELOPMENT FOUNDATION**

Երևան 2023թ.
*Yerevan 2023*

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «Ինստեփանավան» Զարգացման Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) շահույթ չհետապնդող ոչ առևտրային կազմակերպություն է, ստեղծված կամավոր դրամական ու բնաիրային ներդրումների հիման վրա և առանց անդամակցության:

1.2. Հիմնադրամն ստեղծվել է Հիմնադրի՝ 2023 թ. Հուլիսի 25-ի թիվ 01/23 որոշմամբ և կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, «Հիմնադրամների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, այլ իրավական ակտերով և սույն կանոնադրությամբ (այսուհետ՝ Կանոնադրություն):

Հիմնադրամը հիմնադրվել է ՀՀ քաղաքացի Ռուբեն Խաչատրյանի կողմից, ծնված՝ 18.04.1994թ.-ին, նույնականացման քարտ՝ 011340569, ՀԾՀ՝ 2804940802, տրվ. 30.08.2021թ.-ին 001-ի կողմից, գրանցման հասցե՝ ք. Երևան, Չարենցի 55/3:

1.3. Հիմնադրամի ամբողջական անվանումն է.

Հայերեն՝

«Ինստեփանավան» Զարգացման Հիմնադրամ

Անգլերեն՝

"Instepanavan" Development Foundation

Ռուսերեն՝

**Фонд Развития «Инстепанаван»:**

1.4. Հիմնադրամը կարող է օգտագործել իր անվանման օտարալեզու թարգմանություններով ցանկացած տարբերակ:

1.5. Հիմնադրամի գտնվելու վայրի հասցեն (իրավաբանական հասցեն) է Հայաստանի Հանրապետություն, ք. Ստեփանավան, Իսահակյան 7:

1.6. Հիմնադրամը կարող է ունենալ իր անվանումը հայերեն կամ օտար լեզուներով կրող կլոր կնիք: Հիմնադրամի կնիքի վրա կարող է նաև զետեղվել Հիմնադրամի խորհրդանիշը:

1.7. Հիմնադրամը գործում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Հիմնադրամը կարող է գործունեություն իրականացնել նաև օտարերկրյա պետություններում՝ այդ պետությունների օրենսդրությանը համապատասխան:

## 2. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

2.1. Հիմնադրամը համարվում է ստեղծված ու իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական

## 1. GENERAL PROVISIONS

1.1. "Instepanavan" Development Foundation (hereinafter referred to as the "Foundation") is a non-for-profit organization established on the basis of voluntary monetary and in-kind contributions and without membership.

1.2. The Foundation was established by the Decision N 01/23 of the Founder dated July 25, 2023 and is regulated by the Constitution of the Republic of Armenia, Civil Code of the Republic of Armenia, the law "On Foundations" of the Republic of Armenia, other legal acts and this charter (hereinafter referred to as the Charter).

The Foundation was founded by Ruben Khachatryan, citizen of the Republic of Armenia, born on 18.04.1994, ID: 011340569, PSN: 2804940802, issued on 30.08.2021, by 001 (hereinafter referred to as the Founder).

1.3. The full name of the Foundation is:

**In Armenian:**

«Ինստեփանավան» Հիմնադրամ

**In English:**

"Instepanavan" Development Foundation

**In Russian:**

**Фонд Развития «Инстепанаван».**

1.4. The Foundation may use its name in translation to any foreign language.

1.5. The registered office (legal address) of the Foundation is Isahakyan 7, Stepanavan, Armenia.

1.6. The Foundation can have a round seal carrying its name in Armenian or foreign languages. The seal of the Foundation can also carry the symbol of the Foundation.

1.7. The Foundation acts within the whole territory of the Republic of Armenia. The Foundation may also carry out activities in foreign states in accordance with the laws of those states.

## 2. LEGAL STATUS OF THE FOUNDATION

2.1. The Foundation is deemed to be founded and obtains the status of legal entity from the time of state registration in the State Register of the Legal Entities of the Ministry of Justice of the

ռեգիստրում (այսուհետ՝ Պետական Ռեգիստր) պետական գրանցման պահից:

2.2. Հիմնադրամի իրավունակությունը ծագում է պետական գրանցման պահից և դադարելու է լուծարման ավարտի պահին (որի մասին Պետական Ռեգիստրում պետք է լինի լուծարման մասին համապատասխան գրանցում):

2.3. Հիմնադրամն իրավաբանական անձ է և ունի իր Հիմնադիրների գույքից առանձնացված գույք, որը հաշվառված է առանձին հաշվեկշռի տեսքով:

2.4. Հիմնադրամն իրավունք ունի իր անունից ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտավորություններ, դատական վարույթներում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

2.5. Հիմնադիրները պատասխանատվություն չեն կրում իր կողմից ստեղծված Հիմնադրամի ստանձնած պարտավորությունների համար, և Հիմնադրամը պատասխանատու չէ իր Հիմնադրի ստանձնած պարտավորությունների համար:

2.6. Յուրաքանչյուր տարի հաշվետու տարվան հաջորդող հուլիսի 1-ից ոչ ուշ հիմնադրամը՝ հիմնադրամների կողմից հրապարակվող հաշվետվությունների համար նախատեսված համակարգում հրապարակում է հաշվետվություն իր գործունեության մասին:

2.7. Հիմնադրամը կարող է բացել բանկային հաշիվներ Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում, ՀՀ դրամով և արտարժույթով օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.8. Հիմնադրամը կարող է ունենալ իր անվանումը կրող կլոր կնիք, դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև այլ տարբերակիչ միջոցներ:

2.9. Հիմնադրամի գործունեության ժամկետը անսահմանափակ է:

2.10. Հիմնադրամը կարող է իրականացնել օրենքով և այլ օրենսդրական ակտերով չարգելված ցանկացած գործունեություն:

## 3. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

**4.1.** Հիմնադրամի նպատակներն են.

3.1.1. Աջակցել Ստեփանավան համայնքում և հարակից համայնքներում սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը,

3.1.2. Խթանել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթությունը, այդ թվում գործող կրթական կենտրոններին աջակցության, նոր կրթական կենտրոնների հիմնադրման, կրթական ծրագրերի իրականացման միջոցով,

Republic of Armenia (hereinafter referred to as the State Register).

2.2. The legal capacity of the Foundation arises from the time of state registration and ceases at the time of completion of its liquidation (appropriate registration on liquidation at the State Register).

2.3. The Foundation is a legal entity and has assets separated from the assets of its Founders, which is accounted in the separate balance sheet.

2.4. The Foundation may acquire and enjoy property and non-property rights, assume duties, be a plaintiff or a defendant at the court.

2.5. The Founders are not responsible for the obligations of the Foundation established by the Founder, and the Foundation is not responsible for the obligations of its Founder.

2.6. Every year the Foundation shall publish a report on its activity in the system for foundations, not later than July 1-st.

2.7. The Foundation may open bank accounts in banks in the Republic of Armenia and abroad, in AMD or foreign currency in the way envisaged by the law.

2.8. The Foundation can have a round seal bearing its name, stamps and letterheads as well as other distinguishing means.

2.9. The term of the activity of the Foundation is unlimited.

2.10. The Foundation may carry out any activity not prohibited by the law and other legal acts.

## 3. THE GOALS AND BENEFICIARIES OF THE FOUNDATION

**4.1. The goals of the Foundation are:**

3.1.1. Contributing to the Improvement of socio-economic situation in Stepanavan community and neighboring communities,

3.1.2. Promoting formal and informal education, including support for existing educational centers, establishment of new educational centers, implementation of educational programs

3.1.3. Խրախուսել համայնքում զբոսաշրջության զարգացումը՝ տուրիստական հանգույցների, կենտրոնների ստեղծման և աջակցության միջոցով,

3.1.4. Օժանդակել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը,

3.1.5. Աջակցել և իրականացնել համայնքային զարգացման ծրագրեր,

3.1.6. Աջակցել սոցիալական խնդիրներ ունեցող երեխաներին կրթաթոշակներ ստանալու հարցերում,

3.1.7. Աջակցել ու նպաստել համայնքներում բարեգործություն խթանող ենթակառուցվածքների զարգացմանը՝ ստեղծելով այնպիսի միջավայր, որը նպաստում է սոցիալական ձեռնարկատիրությանը ու բարեգործական ծրագրերին ուղղված նախաձեռնություններին և դրանց իրականացմանը,

3.1.8. Օժանդակել սոցիալապես խոցելի խմբերին՝ այդ թվում երեխաներին, տարեցներին, սոցիալական խնդիրներ ունեցող ընտանիքներին և անհատներին, որը ներառում է, սակայն չի սահմանափակվում դեղորայքի, ժամանակավոր կեցավայրի, ֆինանսական օգնության և ապրուստի համար այլ միջոցների տրամադրմամբ,

3.1.9. Աջակցել համայնքներում կրթական, գիտական, մշակութային, առողջապահական կենտրոնների կամ նմանատիպ կենտրոնների ստեղծմանն ու զարգացմանը ,

3.1.10. Աջակցել և խրախուսել արվեստի զարգացմանը

3.1.11. Աջակցել բարեգործական կազմակերպություններին, հիմնադրամներին, այլ ոչ առևտրային և առևտրային կազմակերպություններին, այդ թվում աջակցել նրանց սեփականության իրավունքով պատկանող կամ այլ օրինական հիմքերով շահագործվող, օգտագործվող տարածքների և անշարժ գույքի պահպանմանը, մաքրմանը և կառավարմանը,

3.1.12. Աջակցել ուսումնական, դաստիարակչական, գրականության հրատարակության, դիդակտիկ նյութերի պատրաստման աշխատանքներին,

3.1.13. Իրականացնել ռազմահայրենասիրական ծրագրեր, միջոցառումներ, կազմակերպել ճամբարներ, հավաքներ, օժանդակել համանման կազմակերպությունների գործունեությանը,

3.1.14. Իրականացնել բնապահպանական ծրագրեր, աջակցել բնապահպանական կազմակերպություններին,

3.1.15. Իրականացնել դրամահավաք և/կամ սեփական միջոցներից տրամադրել նվիրատվություն/նվիրաբերություն,

3.1.3. Promoting tourism in the community, creation and support of tourist nodes and centers

3.1.4. Supporting development of agriculture,

3.1.5. Supporting and performing community development programs,

3.1.6. Supporting children in social needs in getting scholarships.

3.1.7. Supporting and promoting the development of philanthropy infrastructure in the communities by creating environment which fosters initiatives and implementing social entrepreneurship and charitable projects;

3.1.8. Supporting vulnerable groups, including children, elders, families and individuals having social needs, including, without limitation of providing medicine, permanent place for living, financial aid, other means necessary for living,

3.1.9. Creating or supporting organizations in communities operating in the field of science, culture, education, healthcare,

3.1.10. Assisting and encouraging the development of art,

3.1.11. Supporting charity organizations, foundations and other non-profit and commercial organizations, inter alia to support in maintaining, cleaning and managing territories and immovable property owned by or operated or used by other legitimate bases by them;

3.1.12. Supporting educational, literature publication, preparation of didactic materials

3.1.13. Performing military-patriotic programs, events, organize camps, gatherings, support the activities of similar organizations,

3.1.14. Implement environmental programs, support environmental organizations,

կրթաթոշակներ, ապրուստավճարներ, դրամաշնորհներ, այլ անհրաժեշտ միջոցներ նշված նպատակների իրականացման համար:

**4.2.** Հիմնադրամի շահառուներն են.

3.2.1. Ստեփանավանի և հարակից համայնքների բնակիչները,

3.2.2. Հայաստանի Հանրապետություն այցելող զբոսաշրջիկները և այցելուները,

3.2.3. Ներդրողները և այլ օտարերկրյա և միջազգային կազմակերպությունները, որոնք գործում են Հայաստանում,

3.2.4. Ոչ առևտրային կազմակերպությունները, ներառյալ հիմնադրամները,

3.2.5. նախադպրոցական ուսումնական հաստատությունները, հանրակրթական դպրոցները, կիրակնօրյա դպրոցները,

3.2.6. մշակութային հաստատությունները

3.2.7. հանրակրթական ծրագրեր իրականացնող, միջին մասնագիտական և բարձրագույն ուսումնական հաստատությունների սովորողները, մանկավարժները

3.2.8. սոցիալապես անապահով ընտանիքների անդամները և անհատները

3.2.9. աղետներից, պատերազմից տուժածները, վիրավորները, փախստականները, վետերանները, ռազմական գործողություններին մասնակցած անձինք,

3.2.10. խնամքի կենտրոնները, մանկատները, ծերանոցները

3.2.11. առողջապահական հաստատությունները, պետական և ոչ պետական հիվանդանոցները, պոլիկլինիկաները

3.2.12. կրթության, գիտության, մշակույթի, սպորտի, սոցիալական աջակցության, բնապահպանության, բարեգործության, առողջապահության ոլորտներում ընդգրկված կամ գործունեություն ծավալող իրավաբանական և ֆիզիկական անձինք

3.1.15. Organizing fundraising and/or using own means to provide donations/for purpose donations, scholarships, allowances, grants, other necessary means for the fulfillment of aims specified above.

**4.2. The beneficiaries of the Foundation are:**

3.2.1. Residents of Stepanavan and neighboring communities;

3.2.2. Tourists and visitors of the Republic of Armenia;

3.2.3. Investors and other foreign and international organizations active in Armenia;

3.2.4. Non-for-profit organizations, including foundations;

3.2.5. preschool educational institutions, public schools, Sunday schools

3.2.6. Cultural institutions,

3.2.7. students of secondary professional and higher educational institutions, pedagogues implementing public education programs

3.2.8. socially disadvantaged family members and individuals

3.2.9. victims of disasters, war, wounded, refugees, veterans, persons who participated in military operations,

3.2.10. care centers, orphanages, nursing homes

3.2.11. health institutions, state and non-state hospitals, polyclinics

3.2.12. legal and natural entities, included or engaged in the fields of education, science, culture, sports, social support, environmental protection, charity, healthcare

## 4. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

4.1. Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել այն դեպքերում, երբ դա ծառայում է այն նպատակների իրականացմանը, որոնց համար այն ստեղծվել է և համապատասխանում է այդ նպատակներին: Հիմնադրամը կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնել, ինչպես անձամբ, այնպես էլ այդ նպատակով իր կողմից ստեղծված տնտեսական ընկերությունների միջոցով, կամ էլ՝ դրանց մասնակից (բաժնետեր) լինելու միջոցով:

## 4. ENTREPRENEURIAL ACTIVITY OF THE FOUNDATION

4.1. The Foundation may carry out entrepreneurial activities in those cases, where they serve to achieve the goals constituting the aim of its establishment and are consistent with these goals. The Foundation may carry out entrepreneurial activity both directly and through commercial companies established by it for that purpose or by the way of being their participant (shareholder). All

Հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած ողջ շահույթը ուղղվում է Կանոնադրությամբ սահմանված նպատակների իրականացմանը:

4.2. Հիմնադրամը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները.

4.2.1. Տնկիների և այլ տնկանյութերի աճեցում (A01.30),
4.2.2. Կաթնատու խոշոր եղջերավոր կենդանիների բուծում (A01.41)
4.2.3. Ձիերի և ձիազգիների բուծում (A01.43)
4.2.4. Ոչխարների և այծերի բուծում (A01.45)
4.2.5. Խոզերի բուծում (A01.46)
4.2.6. Ընտանի թռչունների բուծում (A01.47)
4.2.7. Մեղվաբուծություն, մեղրի և մեղրամոմի արտադրություն (A01.49.1)
4.2.8. Սերմերի մշակում, սերմացուի ֆոնդի ձևավորում (A01.64)
4.2.9. Անտառաբուծություն, անտառային տնտեսության բնագավառում այլ հարակից գործունեություն (A02.10)
4.2.10. Մսի մշակում և պահածոյացում, մսամթերքի արտադրություն (C10.1)
4.2.11. Ընտանի թռչունների մսի մշակում և պահածոյացում (C10.12)
4.2.12. Տրիկոտաժե արտադրատեսակների արտադրություն (C14.3)
4.2.13. Շինարարական փայտե կոնստրուկցիաների արտադրություն, ատաղձագործական գործունեություն (C16.23)
4.2.14. Պոլիգրաֆիական գործունեություն և ծառայությունների մատուցում այդ բնագավառում (C18.1)
4.2.15. Գրասենյակների և խանութների կահավորման կահույքի արտադրություն
4.2.16. Ոչ վնասակար թափոնների հավաքում (E38.11)
4.2.17. Կառուցապատման նախապատրաստական աշխատանքներ (F41.1)
4.2.18. Բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարություն (F41.20)
4.2.19. Հյուրանոցների և համանման բնակատեղերի տրամադրման ծառայություններ (I55.1)
4.2.20. Երիտասարդական ճամբարների և լեռնային բազաների գործունեություն (I55.20.1)
4.2.21. Մանկական ճամբարների գործունեություն (I55.20.2)
4.2.22. Հանգստյան տների գործունեություն (I55.20.3)
4.2.23. Այլ բնակատեղերի տրամադրման ծառայություններ (I55.20.9)
4.2.24. Այլ հանգրվանների կազմակերպում (I55.9)
4.2.25. Ռեստորանների ծառայություններ (I56.10.1)
4.2.26. Հանրային սննդի կազմակերպման այլ գործունեություն (I56.29)

the profit gained as a result of entrepreneurial activities shall be directed to the achievement of the goals set forth in the Charter.

4.2. The Foundation may carry out by itself the following types of entrepreneurial activity:

4.2.1. Growing seedlings and other planting materials (A01.30),
4.2.2. Breeding of dairy cattle (A01.41)
4.2.3. Breeding of horses and horse breeds (A01.43)
4.2.4. Breeding of sheep and goats (A01.45)
4.2.5. Pig breeding (A01.46)
4.2.6. Poultry breeding (A01.47)
4.2.7. Beekeeping, production of honey and beeswax (A01.49.1)
4.2.8. Seed processing, seed stock formation (A01.64)
4.2.9. Forestry, other related activities in the field of forestry (A02.10)
4.2.10. Meat processing and canning, production of meat products (C10.1)
4.2.11. Processing and canning of poultry meat (C10.12)
4.2.12. Manufacture of knitted goods (C14.3)
4.2.13. Manufacture of wooden building structures, carpentry activities (C16.23)
4.2.14. Printing activities and rendering of services in that field (C18.1)
4.2.15 Production of office and shop furniture
4.2.16. Collection of non-hazardous waste (E38.11)
4.2.17. Construction preparatory work (F41.1)
4.2.18. Construction of residential and non-residential buildings (F41.20)
4.2.19. Hotels and similar accommodation services (I55.1)
4.2.20. Activities of youth camps and mountain bases (I55.20.1)
4.2.21. Activities of children's camps (I55.20.2)
4.2.22. Activities of holiday homes (I55.20.3)

4.2.27. Ծրագրային ապահովման մշակում (J62.01)
4.2.28. Տվյալների մշակում, ցանցում տեղեկատվության տեղաբաշխում և հարակից գործունեություն (J63.11)
4.2.29. Վեբ-պորտալների հետ կապված գործողություններ (J63.12)
4.2.30. Սեփական անշարժ գույքի առուվաճառք (L68.10)
4.2.31. Սեփական կամ վարձակալված անշարժ գույքի հանձնում վարձակալության և այլ գործառնություններ (L68.20)
4.2.32. Խորհրդատվական գործունեություն կառավարման հարցերով (M70.2)
4.2.33. Զբոսաշրջային օպերատորների գործունեություն (N79.12)
4.2.34. Հուշանվերների, տնայնագործական, պաշտամունքային և կրոնական նշանակության արտադրատեսակների մանրածախ առևտուր մասնագիտացված խանութներում(G47.78.6)
4.2.35. Վեհաժողովների, առևտրային ցուցահանդեսների կազմակերպում (N82.30)
4.2.36. Առևտրի իրականացման վայրի կազմակերպում (N82.30.2)
4.2.37. Նախադպրոցական կրթություն (P85.10)
4.2.38. Տարրական կրթություն (P85.20)
4.2.39. Հիմնական և միջնակարգ (լրիվ) կրթություն (P85.31)
4.2.40. Կրթական գործունեություն սպորտի և զվարճությունների բնագավառում (P85.51)
4.2.41. Կրթական գործունեություն մշակույթի բնագավառում (P85.52)
4.2.42. Այլ կրթություն, չներառված ուրիշ խմբավորումներում (P85.59)

4.3. Իր կանոնադրական նպատակների իրականացման համար և կանոնադրական գործունեության շրջանակներում Հիմնադրամը կարող է իր հայեցողությամբ և իր միջոցներով տարբեր երկրներից հրավիրված ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այդ թվում՝ աշխատողներին) և Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ ֆիզիկական անձանց (այդ

4.2.23. Other accommodation services (I55.20.9)
4.2.24. Arrangement of other destinations (I55.9)
4.2.25. Restaurant services (I56.10.1)
4.2.26. Other catering activities (I56.29)
4.2.27. Software Development (J62.01)
4.2.28. Data processing, distribution of information on the network and related activities (J63.11)
4.2.29. Activities related to web portals (J63.12)
4.2.30. Sale of own real estate (L68.10)
4.2.31. Leasing and other operations of owned or leased real estate (L68.20)
4.2.32. Management consultancy activities (M70.2)
4.2.33. Activities of tourist operators (N79.12)
4.2.34. Retail trade of souvenirs, household, religious and religious products in specialized stores (G47.78.6)
4.2.35. Organization of conferences, trade exhibitions (N82.30)
4.2.36. Organization of the place of trade (N82.30.2)
4.2.37. Preschool education (P85.10)
4.2.38. Elementary Education (P85.20)
4.2.39. Primary and secondary (full) education (P85.31)
4.2.40. Educational activities in the field of sports and entertainment (P85.51)
4.2.41. Educational activities in the field of culture (P85.52)
4.2.42. Other education, not elsewhere classified (P85.59)

4.3. In order to achieve its charter goals, the Foundation within the scope of the activities, defined by this Charter, may assist non-resident natural persons invited from different countries (including employees) and residents of the Republic of Armenia (including employees), participating in

որպես՝ ասպարեզներին) աջակցել դրամական և բնամթերային ձևով սեփական միջոցներով, այդ թվում՝ կացարանի, տրանսպորտային, սննդի, ապահովագրության և ցանկացած այլ ծախսերի համար վճարում և (կամ) փոխհատուցում:

4.4. Իր կանոնադրական նպատակների իրականացման համար և կանոնադրական գործունեության շրջանակներում Հիմնադրամը կարող է Հիմնադրամի գործունեությունը ներկայացնել արտասահմանյան և միջազգային պատվիրակություններին, ինչպես նաև լրատվական միջոցներին:

## 5. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Կանոնադրությամբ նախատեսված նպատակների համաձայն Հիմնադրամը կարող է.

5.1.1. անարգել տարածել տեղեկություններ իր գործունեության մասին,

5.1.2. հիմնադրել մամուլի ու զանգվածային լրատվության այլ միջոցներ,

5.1.3. Կանոնադրությամբ նախատեսված իր նպատակների համար անհրաժեշտ տեղեկատվություն ստանալ պետական և ինքնակառավարման մարմիններից՝ օրենքով նախատեսված կարգով,

5.1.4. ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր, ներկայացուցչություններ) և հիմնարկներ,

5.1.5. ստեղծել առևտրային ընկերություններ կամ լինել դրանց բաժնետերը կամ մասնակիցը,

5.1.6 իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն և օգտվել ցանկացած այլ իրավունքից, որն արգելված չէ օրենսդրությամբ:

5.2. Հիմնադրամը պարտավորվում է.

5.2.1. գործել համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև այլ օրենսդրական ակտերի ու սույն Կանոնադրության համաձայն,

5.2.2. պահպանել փաստաթղթեր ու վարել հաշվապահական հաշվառում օրենքով սահմանված կարգով,

5.2.3. ներկայացնել տեղեկատվություն ու հաշվետվություն օրենքով նախատեսված կարգով և դեպքերում,

5.2.4. կատարել օրենքով նախատեսված այլ պարտավորություններ:

## 6. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

6.1. Հիմնադրամի կառավարման մարմիններն են.

ա) Հոգաբարձուների խորհուրդը,

բ) Տնօրենը:

the activities of the Foundation, by providing monetary and assistance in kind on its own discretion and by its own means, including payment and (or) compensation of accommodation, travel, food, insurance and any other needs.

4.4. In order to achieve its charter goals, the Foundation, within the scope of the activities, defined by this Charter, may present the activities of the Foundation to foreign and international delegations and media.

## 5. THE RIGHTS AND OBLIGATIONS OF THE FOUNDATION

5.1. In accordance with the goals envisaged by the Charter the Foundation may:

5.1.1. spread the information on its activity without any limitation,

5.1.2. establish press and other means of mass media,

5.1.3. obtain information necessary for the fulfillment of its Charter goals from the state and local self-governing authorities in an order envisaged by the legislation,

5.1.4. establish separate sub-divisions (branches, representative offices) and offices,

5.1.5. establish commercial companies, or be shareholder or participant thereof,

5.1.6. perform other activities, not prohibited by the law and enjoy any other rights not prohibited by the law.

5.2. The Foundation shall:

5.2.1. act in accordance with the Constitution and laws of the Republic of Armenia and other legal acts, as well as this Charter,

5.2.2. keep documents and accounting in a manner envisaged by the law,

5.2.3. present information and reports in order and cases envisaged by the law,

5.2.4. fulfill other obligations envisaged by the law.

## 6. MANAGING BODIES OF THE FOUNDATION

6.1. The managing bodies of the Foundation are:

a) The Board of Trustees,

b) The Director.

| | |
|---|---|
| 6.2. Հոգաբարձուների խորհուրդը: Հիմնադրամի կառավարման բարձրագույն և հսկողություն իրականացնող մարմինը Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն է (այսուհետ՝ Խորհուրդ): Խորհուրդը կազմված է 7 (յոթ) անդամից՝ ներառյալ Խորհրդի Նախագահը: Առաջին կազմը ձևավորվում է Հիմնադրի կողմից, իսկ կազմի մեջ հետագա փոփոխությունները իրականացվում են Խորհրդի կողմից: | 6.2. **The Board of Trustees.** The highest managing and the control body is the Board of Trustees (hereinafter referred to as the Board). The Board consists of 7 (seven) members, including the Chairman of the Board. The first membership is formed by the Founders and further changes in the membership are made by the Board. |
| 6.2.1. Խորհրդի առաջին կազմի լիազորությունները սկսվում են Հիմնադրամի՝ պետական գրանցումից հետո երեք ամսվա ժամկետի ավարտի հաջորդ օրվանից, իսկ եթե նշանակվել են Խորհրդի բոլոր անդամները, ապա դրա հաջորդ օրվանից: | 6.2.1. The powers of the first Board start from the next day after the expiration of a three-month period after state registration of the Foundation, and if all the members of the Board have been appointed - from the day following such appointment. |
| 6.2.2. Խորհրդի անդամ կարող են լինել 18 տարին լրացած գործունակ և աշխատունակ ֆիզիկական անձինք: | 6.2.2. The members of the Board may be capable natural persons at or above the age of 18 years. |
| 6.2.3. Խորհրդի անդամների և նախագահի լիազորությունների ժամկետը սահմանափակված չէ: | 6.2.3. The term of the powers of the Board members and the Chairman is not limited. |
| 6.3. Խորհրդի անդամները կարող են. | 6.3. The Board members may: |
| 6.3.1. առաջարկություններ ներկայացնել նիստերի օրակարգի վերաբերյալ ու քննարկման ենթակա հարցերի շուրջ, | 6.3.1. make suggestions on the agenda of the meetings and matters under discussion; |
| 6.3.2. Խորհրդի քննարկման համար նախապատրաստել ու ներկայացնել հարցերի, առաջարկների ու որոշումների նախագծեր, | 6.3.2. prepare and present to the Board discussion matters, offers and decision drafts; |
| 6.3.3. ստանալ Հիմնադրամի գործունեությանը վերաբերող ցանկացած հարցի մասին ցանկացած տեղեկատվություն, | 6.3.3. receive any information concerning any matter about the activity of the Foundation; |
| 6.3.4. իր ստանձնած պարտավորությունների կատարման ընթացքում կատարված ծախսերի դիմաց ստանալ փոխհատուցում: | 6.3.4. receive compensation of the expenses made within fulfillment of its obligations. |
| 6.4. Խորհրդի անդամի լիազորությունները դադարեցվում են. | 6.4. The powers of the Board member cease: |
| 6.4.1. Խորհրդի նախագահին ներկայացված գրավոր դիմումի համաձայն, | 6.4.1. on the basis of the written application given to the Chairman of the Board; |
| 6.4.2. Խորհրդի մնացած անդամների ձայների առնվազն 3/4-ի որոշումով իր ստանձնած պարտավորությունները պատշաճ չկատարելու դեպքում, | 6.4.2. at the decision of at least 3/4th of the votes of the remaining members of the Board in the case of non-fulfilment of his/her obligations properly; |
| 6.4.3. դատարանի ուժի մեջ մտած որոշման հիման վրա իրավաբանորեն անգործունակ ճանաչվելու դեպքում, | 6.4.3. in case of being recognized legally incapable by the effective decision of the court; |
| 6.4.4. նրա մահվան դեպքում: | 6.4.4. in the case of his/her death. |
| 6.5. Խորհրդի անդամները չեն կարող լինել Հիմնադրամի այլ մարմնի անդամ | 6.5. The members of the Board may not be a member of the other body of the Foundation. |
| 6.6. Խորհրդի կազմում թափուր տեղի առկայության պարագայում թափուր տեղը լրացվում է հետևյալ կերպ. | 6.6. In case of presence of a vacant place within the Board, the vacant place shall be filled in the following way: |

6.6.1. Խորհրդի նոր անդամը կարող է ընտրվել Խորհրդի մնացած բոլոր անդամների ձայների պարզ մեծամասնությամբ,

6.6.1. The new member of the Board may be elected by majority of the votes of all the other members of the Board;

6.6.2. ընտրությունների միջոցով անդամակցության հավակնող նոր թեկնածուն կարող է առաջադրվել Խորհրդի անդամների կողմից.

6.6.2. A candidate for the new member may be offered by the Board members.

6.7. Խորհրդի լիազորություններն են.

6.7.1. Հիմնադրամի ռազմավարական ծրագրի (ծրագրերի) հաստատումը,

6.7.2. Հիմնադրամի կողմից իրականացվող (այդ թվում` անձամբ) ձեռնարկատիրական գործունեության(-ների) տեսակների սահմանումը,

6.7.3. Հիմնադրամի բյուջեի և դրա փոփոխությունների հաստատումը, տարեկան ֆինանսական հաշվետվության և Հիմնադրամի գործունեության տարեկան հաշվետվության հաստատումը,

6.7.4. Հիմնադրամի գույքի տնօրինման կարգի հաստատումը,

6.7.5. Հիմնադրամի վերակազմակերպման մասին որոշման ընդունումը, եթե որոշակի հանգամանքների պատճառով Հիմնադիրները չեն կարող գործել,

6.7.6. Հիմնադրամի լուծարման նպատակով դատարան դիմելու որոշման ընդունումը,

6.7.7. Հիմնադրամի լուծարման հանձնաժողովի նշանակումը, լուծարման կարգի և ժամկետների սահմանումը, լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատումը, լուծարման հաշվեկշռի հաստատումը,

6.7.8. Խորհրդի անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

6.7.9. Խորհրդի Նախագահի ընտրության մասին, ինչպես նաև նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշումների ընդունումը,

6.7.10. տնօրենի ընտրության մասին որոշման ընդունումը, վարձատրության չափի սահմանումը, ինչպես նաև նրան լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին որոշման ընդունումը,

6.7.11. 20,000,000 (քսան միլիոն) ՀՀ դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթով գործարքների հաստատումը, բացառությամբ նվիրատվության, նվիրաբերության կամ այլ անհատույց գործարքների, որով Հիմնադրամը անհատույց որպես սեփականություն ստանում է գույք, իրեն կամ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ) կամ ազատվում է գույքային պարտավորությունից,

6.7.12. առևտրային ընկերություններ հիմնելու կամ դրանցում մասնակցություն ունենալու մասին որոշումների ընդունումը, ինչպես նաև առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծման ու դրանց կանոնադրությունների հաստատման վերաբերյալ որոշումների ընդունումը,

6.7. The powers of the Board are:

6.7.1. approval of the strategic plan (plans) of the Foundation;

6.7.2. definition of the types of the entrepreneurial activity(ies) carried out by the Foundation (including by the Foundation itself);

6.7.3. approval of the Foundation budget and its amendments, annual financial reports and annual reports of the Foundation activity;

6.7.4. approval of the procedure of the Foundation's assets' disposition;

6.7.5. adoption of the decision on the Foundation reorganization, if due to some circumstances the Founders are not able to act;

6.7.6. adoption of the decision on applying to the court for the Foundation liquidation;

6.7.7. appointment of the liquidation commission of the Foundation, determination of the procedure and terms of liquidation, approval of the liquidation interim balance, approval of the liquidation balance;

6.7.8. adoption of the decisions on early termination of the powers of the members of the Board;

6.7.9. adoption of the decision on election of the Chairman of the Board and early termination of his/her powers;

6.7.10. adoption of the decision on election of the Director, defining remuneration amount of the Director, as well as adoption of the decision on early termination of his/her powers;

6.7.11. approval of the deals exceeding AMD 20.000.000 (twenty million) or the foreign currency equivalent thereto, except for donation, grant or other pro bono deals, where the Foundation without compensation receives ownership of property or property right (or claim) against itself or a third person or is released from obligation;

6.7.12. adoption of the decisions on establishing commercial companies and other entities or participation in them, as well as establishing the separate subdivisions and offices and approving their charters;

6.7.13. Հիմնադրամի ֆինանսա-տնտեսական գործունեության վերահսկումը,
6.7.14. Տնօրենի հաշվետվությունների լսումները, սույն Կանոնադրությամբ նախատեսված պարբերականությամբ,
6.7.15. Խորհրդի որոշումների իրականացման գործընթացի վերահսկողությունը,
6.7.16. Հիմնադրամի աուդիտ իրականացնող անձի (աուդիտորի) ընտրությունը,
6.7.17. Հիմնադրամի կառուցվածքի հաստատումը,
6.7.18. Ներքին կանոնների հաստատումը,
6.7.19. Հիմնադրամի հաստիքացուցակի հաստատումը,

6.7.20. Հիմնադրամի Կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր խմբագրությամբ Կանոնադրություն հաստատելու մասին որոշումների ընդունումը,

6.7.21. Հիմնադրամի այլ կառավարման մարմինների իրավասությունից դուրս գտնվող և Հայաստանի Հանրապետության օրենքով ու սույն Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորությունների իրականացում:

6.8. Խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում են քվեարկելու իրավունք ունեցող Խորհրդի անդամների պարզ մեծամասնությունը: Քվեարկության ժամանակ Խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայնի իրավունք: Եթե այլ բան նախատեսված չէ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ սույն Կանոնադրությամբ, Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին մասնակցող Խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

6.8.1. Խորհրդի Նախագահի ընտրության և ազատման, Հիմնադրամի Տնօրենի ընտրության և պաշտոնից ազատման, ինչպես նաև Հիմնադրամի անվանման փոփոխության, լուծարման և Կանոնադրության փոփոխության կամ նոր խմբագրությամբ Կանոնադրություն հաստատման մասին որոշումներն ընդունվում են Խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

6.8.2. Եթե Խորհրդի նիստի ընթացքում քննարկվում է հարց, որը վերաբերում է Խորհրդի որևէ անդամի կամ իր հետ կապ ունեցող անձի (ծնողի, ամուսնու, կնոջ, երեխայի, եղբոր, քրոջ, ամուսնու/կնոջ ծնողների, ամուսնու/կնոջ եղբոր, քրոջ) գույքային կամ այլ շահերին, ապա շահագրգիռ Խորհրդի անդամը չի մասնակցում քվեարկությանը:

6.8.3. Խորհրդի նախագահն ընտրվում է Խորհրդի անդամների կողմից՝ Կանոնադրությամբ սահմանված կարգով: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել Նախագահին կամ ընտրել նոր Նախագահ՝ իր անդամների ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ:

6.9. Խորհրդի նախագահը.

6.7.13. control of the financial-economic activity of the Foundation;
6.7.14. hearing the reports of the director with regularity envisaged by this Charter;
6.7.15. control of the process of performance of decisions of the Board;
6.7.16. election of the person/entity performing the Foundation's audit (auditor);
6.7.17. approval of the structure of the Foundation,
6.7.18. approval of the by-laws;
6.7.19. approval of the positions list of the Foundation;
6.7.20. adoption of the decisions on amendments and additions to the Charterand the Charter with new edition;

6.7.21. fulfillment of other powers out of competence of other managing bodies of the Foundation and envisaged by the laws of the Republic of Armenia and this Charter.

6.8. The Board shall perform its activities through sessions. The Board session shall be deemed valid if attended by a simple majority of the Board members eligible to vote. While voting, each Board member shall have one vote. Unless otherwise provided by the legislation of the Republic of Armenia or this Charter, the Board decisions shall be adopted by a simple majority of the Board members present at the session.

6.8.1. Decisions on electing and dismissing the Board Chairman, on electing and dismissing the Director of the Foundation from the position held, as well as on changing the name of the Foundation, its liquidation and approval of amendments and the Charter with new edition shall be taken by a majority of the Board members.

6.8.2. If a matter on the assets or other interests of any member of the Board or the affiliated with them person (parent, spouse, child, brother, sister, spouse parent, spouse child, brother and sister) is discussed in the Board meeting, then the interested Board member does not participate in the voting.

6.8.3. The Chairman of the Board is elected by the Board members as envisaged by the Charter. The Board may at any time re-elect the Chairman or elect a new one by a simple majority of the Board members.

6.9. The Chairman of the Board:

6.9.1. կազմակերպում է Խորհրդի աշխատանքը,

6.9.2. հրավիրում է Խորհրդի նիստեր և նախագահում դրանք,

6.9.3. կազմակերպում է նիստերի արձանագրությունների վարումը ու պահպանման գործընթացը,

6.9.4. Խորհրդի քննարկմանն է ներկայացնում Խորհրդի անդամների լիազորությունների դադարեցման վերաբերյալ որոշման նախագիծը սույն Կանոնադրությամբ նախատեսված դեպքերում,

6.9.5. Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականություններն իրականացվում են Խորհրդի անդամներից մեկը՝ Խորհրդի որոշմամբ,

6.9.6. կատարում է օրենքով սահմանված այլ գործառույթներ:

6.10. Խորհրդի նիստերը Խորհրդի նախագահի կողմից գումարվում են ոչ պակաս, քան տարեկան 3 (երեք) անգամ: Խորհրդի նիստեր կարող են անցկացվել Խորհրդի անդամների ձայների 1/3-ի պահանջով, Խորհրդի նախագահի կողմից համապատասխան պահանջի ներկայացումից 30 (երեսուն) օրվա ընթացքում: Խորհրդի նիստերը կարող են անցկացվել էլեկտրոնային փոստի, կամ կապի այլ ուղիների (հեռախոս, տեսակոնֆերանս կամ Skype կոնֆերանս և այլն) միջոցով, ինչպես նաև ըստ պահանջի: Եթե Խորհրդի նախագահը նշված ժամկետում նիստ չի հրավիրում, ապա նիստը կարող են հրավիրել այն անձինք, ովքեր ներկայացրել էին պահանջը:

6.11. Հիմնադրամի տնօրենը: Հիմնադրամի ընթացիկ գործունեության կառավարումն իրականացվում է տնօրենի կողմից: Տնօրենն ընտրվում և ազատվում է պաշտոնից Խորհրդի կողմից: Առաջին անգամ տնօրենը կարող է նշանակվել Հիմնադիրների կողմից:

6.12. Տնօրենի իրավունքներն ու պարտականությունները սահմանվում են օրենքով, սույն Կանոնադրությամբ և նրա հետ կնքված պայմանագրով: Հիմնադրամի անունից պայմանագիրն ստորագրվում է Խորհրդի Նախագահի կամ Խորհրդի լիազորած այլ անձի կողմից:

6.13. Տնօրենը.

6.13.1. կազմակերպում է Խորհրդի որոշումների իրականացման գործընթացը,

6.13.2. տնօրինում է Հիմնադրամի գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները, Հիմնադրամի անունից գործարքներ է կնքում,

6.13.3. ներկայացնում է Հիմնադրամը Հայաստանի Հանրապետության տարածքում և արտերկրում,

6.13.4. գործում է առանց լիազորագրի,

6.13.5. Հիմնադրամի անունից գործելու լիազորագրեր է տալիս,

6.9.1. organizes the work of the Board;

6.9.2. convenes the Board meetings and presides in them;

6.9.3. organizes the keeping of the minutes of the meetings;

6.9.4. presents for the Board discussion the draft decision on the termination of the powers of the members of the Board in cases envisaged by this Charter;

6.9.5. in case of absence of the Chairman of the Board his/her obligations are fulfiled by one of the members of the Board, by the decision of the Board;

6.9.6. performs other functions provided by the law.

6.10. The Board meetings are convened not less than 3 (three) times a year by the Chairman of the Board. The Board meetings may be held by the request of 1/3rd of the votes of Board members within 30 (thirty) days after presenting the appropriate request by the Chairman of the Board. A Board meeting may be held by electronic mail or other means of communication (phone, video or Skype conferences, etc.) as well as by the inquiry. If the Board Chairman does not convene a meeting within the stated period, then the meeting may be convened by the persons having presented the request.

6.11. **The Director of the Foundation.** The management of the current activity of the Foundation is fulfilled by the Director. The Director is elected and dismissed by the Board. The Director can be appointed for the first time by the Founders.

6.12. The rights and obligations of the Director are determined by law, this Charter and the contract concluded with him/her. The contract on behalf of the Foundation is signed by the Chairman or other person authorized by the Board.

6.13. The Director:

6.13.1. organizes fulfillment of the Board decisions;

6.13.2. disposes of the assets of the Foundation, including financial means, executes deals on behalf of the Foundation;

6.13.3. represents the Foundation in the Republic of Armenia and abroad;

6.13.4. acts without the power of attorney;

6.13.5. gives the powers of attorney to act on behalf of the Foundation;

6.13.6. կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանագրեր օրենքով և սույն Կանոնադրությամբ սահմանված կարգով,

6.13.7. Հիմնադրամի հաշիվներ է բացում Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում (այդ թվում՝ արտարժույթով հաշիվներ),

6.13.8. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում Հիմնադրամի աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ու Հիմնադրամի կողմից հիմնադրվող տնտեսական ընկերությունների կանոնադրությունները, Հիմնադրամի վարչա-կազմակերպչական կառուցվածքը, հաստիքացուցակը,

6.13.9. Խորհրդի հաստատմանն է ներկայացնում սույն կանոնադրության 6.7.11 կետով նախատեսված գործարքները,

6.13.10. իր իրավասության շրջանակներում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարման ընթացքը,

6.13.11. սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Հիմնադրամի աշխատողներին, այդ թվում՝ Հիմնադրամի առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների ղեկավարներին ու աշխատողներին,

6.13.12. կիրառում է աշխատողների նկատմամբ պարգևատրումներ և կարգապահական պատասխանատվության միջոցներ,

6.13.13. տարին 1 (մեկ) անգամ Խորհրդին է ներկայացնում Հիմնադրամի գործունեության մասին հաշվետվություն:

6.14. Տնօրենը կարող է իրականացնել ցանկացած այլ վճարովի աշխատանք միայն Խորհրդի համաձայնությամբ:

6.15. Խորհուրդը կարող է ցանկացած պահի լուծել տնօրենի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն Կանոնադրությամբ և վերջինիս հետ ստորագրված աշխատանքային պայմանագրով սահմանված կարգով:

6.16. Հիմնադրամը հաշիվներ է վարում և ֆինանսական ու վիճակագրական հաշվետվություններ է ներկայացնում Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ օրենսդրական ակտերով նախատեսված կարգով:

6.13.6. executes contracts, including employment contracts in a manner envisaged by the law and this Charter;

6.13.7. opens accounts of the Foundation in the banks in the Republic of Armenia and foreign states (including foreign currency accounts);

6.13.8. Presents for the approval by the Board the Foundation's internal working by-laws, charters of the separate divisions and offices, and of the business entities established by the Foundation, the Foundation's administrative-organizational structure, staff list;

6.13.9. presents for the Board approval deals set forth in the section 6.7.11. of this Charter;

6.13.10. in his/her competency makes orders, instructions, gives mandatory instructions and controls on their fulfillment;

6.13.11. according to the defined procedure, employs and dismisses the Foundation's employees, including the managing officers and the employees of the Foundation's separate subdivisions and offices;

6.13.12. applies bonuses and disciplinary sanctions towards the employees;

6.13.13. once (1) a year submits a report on the activities of the Foundation for the consideration of the Board.

6.14. The Director may hold any other paid jobs only upon the consent of the Board.

6.15. The Board may at any time terminate the employment contract concluded with the Director in an order envisaged by the law of the Republic of Armenia, this Charter and the employment contract signed with the Director.

6.16. The Foundation keeps the accounts and submits financial and statistical reports in an order envisaged by the laws of the Republic of Armenia and other legal acts.

## 7. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳՈՒՅՔԸ

7.1. Հիմնադրամը կարող է ունենալ իր սեփականությունը հանդիսացող առանձնացված գույք և պատասխանատվություն է կրում այդ գույքով իր կողմից ստանձնած պարտավորությունների համար:

7.2. Հիմնադրման պահին Հիմնադրի կողմից փոխանցված նյութական և (կամ) դրամական միջոցները Հիմնադրամի նախնական ակտիվներ են հանդիսանում: Հիմնադրի կողմից Հիմնադրամին տրված գույքը հանդիսանում է Հիմնադրամի

## 7. THE ASSETS OF THE FOUNDATION

7.1. The Foundation may own separate assets and be liable for its obligations by the said assets.

7.2. Material and/or financial means transferred by the Founder at the moment of establishment are the initial assets of the Foundation. The assets given to the Foundation by the Founder are ownership of the Foundation. The

սեփականությունը: Հիմնադրամն օգտագործում է այդ գույքը Կանոնադրությամբ նախատեսված կարգով:

7.3. Հիմնադրամի գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ.

7.3.1. Հիմնադրի ներդրումները,

7.3.2. ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից իրականացված նվիրատվությունները և նվերները, այդ թվում՝ օտարերկրյա քաղաքացիների, իրավաբանական անձանց, միջազգային կազմակերպությունների կողմից կատարված նվիրատվությունները ու նվերները,

7.3.3. նվիրաբերությունները,

7.3.4. Հիմնադրամի կողմից իրականացված գործունեությունից գոյացած եկամուտները,

7.3.5. Հիմնադրամի ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած ակտիվները, ինչպես նաև Հիմնադրամի կողմից ստեղծված տնտեսական ընկերությունների կամ այդ ընկերություններում Հիմնադրամի՝ մասնակից հանդիսանալու (մասնաբաժին ունենալու) դեպքում ձեռնարկատիրական գործունեության արդյունքում գոյացած ակտիվները,

7.3.6. Հիմնադրամի կողմից ստացված փոխառության կամ վարկի գումարները,

7.3.7. օրենքով չարգելված այլ միջոցներ:

7.4. Հիմնադրամի սեփականությունը չի կարող օգտագործվել հօգուտ իր Հիմնադիրների, Հիմնադրամի մարմինների անդամների կամ կառավարման մարմինների, ինչպես նաև Հիմնադրամի աշխատողի, բացառությամբ աշխատողների աշխատավարձերի ու այն ծախսերի դիմաց փոխհատուցման դեպքերի, որոնք առաջացել են Հիմնադրամի կառավարման մարմինների անդամների պարտականությունների իրականացման անհրաժեշտությունից, ինչպես նաև այն դեպքերի, երբ Հիմնադիրները, Հիմնադրամի կառավարման մարմինների անդամները և Հիմնադրամի աշխատողները Կանոնադրության համաձայն շահառու են հանդիսանում:

Foundation uses those assets in a manner envisaged by the Charter.

7.3. The source of formation of the assets of the Foundation may be:

7.3.1. the contributions of the Founder;

7.3.2. donations and gifts of individuals and legal entities, including foreign citizens, legal entities, donations, and gifts of international organizations.

7.3.3. grants;

7.3.4. incomes obtained from the activities fulfilled by the Foundation;

7.3.5. assets obtained from entrepreneurial activity of the Foundation and commercial companies established by the Foundation or commercial companies in which the Foundation has participation (has shares);

7.3.6. loan or credit that the Foundation may receive;

7.3.7. other means not prohibited by law.

7.4. The property of the Foundation may not be used to the benefit of its Founders, members of the managing bodies of the Foundation, as well as the Foundation employees, except for the employees' salaries and compensation of the expenses arising from the fulfillment of the duties by the members of managing bodies of the Foundation, as well as the cases when the Founder, the members of managing bodies of the Foundation and the Foundation employees are the beneficiaries in accordance with the Charter.

## 8. ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

8.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել Հիմնադիրների որոշմամբ: Եթե որոշակի հանգամանքների պատճառով Հիմնադիրները չեն կարող գործել, ապա Հիմնադրամը վերակազմակերպվում է Խորհրդի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

8.1.1. Հիմնադրամը կարող է վերակազմակերպվել միայն Հիմնադրամի՝ այլ հիմնադրամին միացման կամ այլ հիմնադրամի հետ միաձուլման ձևով:

## 8. REORGANIZATION AND LIQUIDATION OF THE FOUNDATION

8.1. The Foundation may be reorganized by the decision of the Founders. If due to some circumstances the Founder is not able to act, then the Foundation may be reorganized by the decision of the Board, in accordance with the legislation of the Republic of Armenia.

8.1.1. The Foundation may be reorganized only by the way of merger or consolidation with other foundations.

8.1.2. Միաձուլման ճանապարհով վերակազմակերպման դեպքում Հիմնադրամը համարվում է վերակազմակերպված նոր ստեղծված հիմնադրամի պետական գրանցման պահից:

8.1.3. Հիմնադրամի՝ մեկ այլ հիմնադրամի հետ միացման ճանապարհով վերակազմակերպման դեպքում երկուսն էլ համարվում են վերակազմակերպված՝ միացած հիմնադրամի գործունեությունը դադարելու վերաբերյալ պետական գրանցման պահից:

8.2. Հիմնադրամի լուծարումը հանգեցնում է Հիմնադրամի գործունեության դադարմանը՝ առանց նրա իրավունքները և պարտականությունների իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

8.3. Հիմնադրամի լուծարման մասին որոշումը կարող է ընդունվել միայն դատարանի կողմից՝ շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա:

8.4. Հիմնադրամը կարող է լուծարվել.

8.4.1. եթե Հիմնադրամի գույքը բավարար չէ դրա գործունեության իրականացման համար և անհրաժեշտ գույք ստանալու հնարավորություն չկա,

8.4.2. եթե իր գործունեությամբ Հիմնադրամը շեղվել է իր՝ Կանոնադրությամբ նախատեսված նպատակներից,

8.4.3. եթե հնարավոր չէ հասնել Հիմնադրամի նպատակներին կամ կատարել այդ նպատակների փոփոխություններ,

8.4.4. եթե Հիմնադրամի գործունեությունը վտանգում է պետական ու հանրային անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները,

8.4.5. եթե Հիմնադրամը թույլ է տվել օրենքի բազմակի կամ կոպիտ խախտումներ, կամ պարբերաբար իրականացրել է իր Կանոնադրական նպատակներին հակասող գործունեություն,

8.4.6. եթե Հիմնադրամը ստեղծելիս Հիմնադիրները թույլ է տվել օրենքի էական խախտումներ կամ կեղծիքներ,

8.4.7. Հիմնադրամը կարող է լուծարվել օրենքով նախատեսված այլ դեպքերում:

8.5. Հիմնադրամի լուծարման մասին դատարանի որոշման ընդունումից հետո Հիմնադրամի Խորհուրդը նշանակում է լուծարման հանձնաժողով և սահմանում է լուծարման կարգն ու ժամկետները:

8.6. Լուծարման հանձնաժողովի նշանակման պահից սկսած Հիմնադրամի գործերի կառավարման լիազորությունները փոխանցվում են լուծարման հանձնաժողովին: Լուծարման հանձնաժողովը դատարանում հանդես է գալիս Հիմնադրամի անունից:

8.1.2. In case of reorganization by the way of consolidation the Foundation is deemed to be reorganized from the time of state registration of the newly established foundation.

8.1.3. In case of reorganization by the way of merger of the Foundation with the other foundation they are deemed to be reorganized from the time of state registration of cessation of activities of the foundation that was merged.

8.2. The Foundation's liquidation leads to termination of the activity of the Foundation, without succession of its rights and obligations to third parties.

8.3. The decision on liquidation of the Foundation may be adopted only by the court on the basis of application of interested persons.

8.4. The Foundation may be liquidated:

8.4.1. if the assets of the Foundation are insufficient for fulfillment of its activity and there is no opportunity to obtain the required assets;

8.4.2. by its activity the Foundation has deviated from its goals envisaged by the Charter;

8.4.3. there is no opportunity to reach the goals of the Foundation or to make changes in the goals;

8.4.4. the activity of the Foundation threatens the state and public security, public order, public health and values, others' rights and freedoms;

8.4.5. the Foundation committed multiple or gross violations of law or periodically carried out activity contradictory to its Charter goals;

8.4.6. while establishing the Foundation the Founders have made gross violations of the law or frauds;

8.4.7. the Foundation may be liquidated in other cases envisaged by law.

8.5. After adoption of the court decision on the liquidation of the Foundation, the Board of the Foundation appoints a liquidation commission and determines the procedure and term of liquidation.

8.6. From the time of appointment of the liquidation commission the management powers of the affairs of the Foundation are transferred to the liquidation commission. The liquidation commission acts on behalf of the Foundation in the court.

8.7. Հիմնադրամի լուծարման գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը (այդ թվում՝ լուծարման հանձնաժողովի կազմի, լուծարման սկզբի և ավարտի մասին) ենթակա է գրանցման իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում լուծարման հանձնաժողովի դիմումի հիման վրա:

8.7. The information on the process of the liquidation of the Foundation (including the composition of the liquidation commission, beginning and completion) is subject to registration in the register of state registration of legal entities on the basis of the application of the liquidation commission.

8.8. Լուծարման հանձնաժողովը հայտարարում է պարտատերերի կողմից պահանջների ներկայացման պայմանների և կարգի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև Հիմնադրամի լուծարման մասին տեղեկատվություն Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետը չի կարող պակաս լինել 2 (երկու) ամսից, որը և համարվում է լուծարման գործընթացի սկիզբ:

8.8. The liquidation commission announces information on the terms and procedure of submitting the creditors' claims and Foundation liquidation in the official web page of public announcement of the Republic of Armenia. The term may not be less than 2 (two) months from the time of publishing about the liquidation and which is considered to be the beginning of the liquidation process.

8.9. Լուծարման հանձնաժողովը իրականացնում է գույքի գնահատումը, միջոցներ է ձեռնարկում պարտատերերին գտնելու, դեբիտորական պարտքերն ստանալու ուղղությամբ, ինչպես նաև տեղեկացնում է պարտատերերին Հիմնադրամի լուծարման մասին:

8.9. The liquidation commission appraises the assets, takes measures on finding creditors, obtaining receivables, as well as informs creditors on the liquidation of the Foundation.

8.10. Պարտատերերի պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման միջանկյալ հաշվեկշիռը, որը պարունակում է տեղեկատվություն՝ լուծարվող Հիմնադրամի գույքի կազմի, պարտատերերի պահանջների ցանկի, ինչպես նաև պահանջների քննարկման արդյունքների վերաբերյալ: Լուծարման միջանկյալ հաշվեկշիռը հաստատում է Խորհուրդը:

8.10. After completion of the term for submission of the creditors' claims, the liquidation commission prepares an interim liquidation balance which contains information on the composition of the liquidating Foundation assets, list of the creditors' claims, as well as on the results of claims discussion. Interim liquidation balance is approved by the Board.

8.11. Պարտատերերի պահանջների բավարարումից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ լուծարման միջանկյալ հաշվեկշռի հաստատման պահին Հիմնադրամը պարտավորություններ չունի պարտատերերի նկատմամբ, գույքն ուղղվում է սույն Կանոնադրությամբ նախատեսված նպատակներին, սակայն եթե դա հնարավոր չէ, ապա գույքը փոխանցվում է պետական բյուջե:

8.11. After satisfaction of the creditors' claims, as well as in case when at the time of approval of the liquidation interim balance the Foundation has no obligations towards creditors, the assets are directed to the goals envisaged by this Charter, but if it is impossible, the assets are transferred to the state budget.

8.12. Հիմնադրամի գույքի ամբողջական բաշխումն իրականացնելուց հետո լուծարման հանձնաժողովը կազմում է լուծարման հաշվեկշիռ և ներկայացնում է այն Խորհրդի հաստատմանը: Լուծարման հանձնաժողովը ներկայացնում է Խորհրդի կողմից հաստատված լուծարման հաշվեկշիռը դատարանի հաստատմանը:

8.12. After fulfillment of the total distribution of the Foundation assets the liquidation commission prepares the liquidation balance and presents it for the approval of the Board. The liquidation commission presents the liquidation balance approved by the Board for the approval of the court.

8.13. Հիմնադրամի լուծարման գործընթացը համարվում է ավարտված և նրա գոյությունը դադարած դրա մասին պետական գրանցման պահից:

8.13. The liquidation of the Foundation is deemed to be completed and it is ceased from the time of state registration thereon.

## 9. ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1. Հիմնադիրները միաձայն որոշմամբ կարող են փոփոխություններ մտցնել Հիմնադրամի կանոնադրության մեջ: Խորհուրդը կարող է կանոնադրությամբ սահմանված կարգով փոփոխություններ մտցնել Հիմնադրամի Կանոնադրության մեջ:

9.2. Երբ Կանոնադրության փոփոխությունները վերաբերում են Հիմնադրամի նպատակներին և/կամ շահառուներին, ապա փոփոխություններ իրականացնելու իրավունքը վերապահվում է դատարանին՝ Հիմնադրամի կառավարման մարմիններից մեկի կամ Հիմնադրի կողմից ներկայացված դիմումի հիման վրա:

## 9. PROCEDURE ON MAKING AMENDMENTS AND ADDITIONS TO THE CHARTER

9.1. The Founders may make amendments to the Charter of the Foundation by unanimous vote. The Board may make amendments to the Charter as provided by the Charter of the Foundation.

9.2. If amendments of the Charter refer to the goals and/or beneficiaries of the Foundation, then the court shall make a decision on making amendments and additions upon the application of one of the Foundation managing bodies or the Founder.

## 10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույն Կանոնադրությամբ չկարգավորված հարաբերությունները ու խնդիրները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10.2. Սույն Կանոնադրությունը կազմված է 2 (երկու) օրինակից, հայերեն և անգլերեն լեզուներով:

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋ

## 10. FINAL PROVISIONS

10.1. The relations and issues not regulated by this Charter are regulated by the legislation of the Republic of Armenia.

10.2. This Charter is made in 2 (two) copies in Armenian and English.

**END OF CHARTER**

42